կողմից, ստացած հիւանդութիւնը միւս կողմից, նրան ձգեցին մի տեսակ սրտատոչոր մելամաղձութեան մէջ: Նա սկսեց ինքնամոռացութեան մէջ հանգստութիւն որոնել եւ յանձն առեց մի այդպիսի դժուարին աշխատութիւն, որպիսին է եկեղեցական պատմութիւնը, որ աւելի մտածութիւն է պահանջում, քան թէ երեւակայութեան բանաստեղծական թռիչքը: Նրա վանք մտնելը եւ հոգեւոր կոչման ցանկութիւնն անգամ մի տեսակ քմահաճութիւն է, ինչպէս եկեղեցական պատմութիւն գրելը, որ հետեւանք է նոյն մելամաղձական դրութեան: Նա կամենում է մոռանալ իրան եւ նետւում է ամենադժուարին աշխատութիւնների մէջ, որ ամբողջովին կլանեն նրա մտածութիւնները: Բանտի մէջ սկսեց եբրայեցերէն սովորել՝ Հին Կտակարանի հետ լաւ ծանօթանալու համար: Նա իսկապէս շատ դժբախտ մարդ է... Նրա մուզան երբեք կեանքի քաղցրութիւն չէ ճաշակել... Տխո՛ւր եւ դա՛ռն կերպով անցել են նրա օրերը...

Համարեայ ամբողջ գիշերը անցուցինք մենք խօսելով. իմ քունը չէր տանում: Ասլանը նոյնպէս գտնւում էր մի տեսակ գրգռուած դրութեան մէջ, որ յատուկ է այն րոպէներին, երբ մարդ պէտք է բաժանուէ իր սիրեցեալներից եւ բաժանուէ երկար, շատ երկար ժամանակով...

Առաւօտեան պէտք է նա ճանապարհ ընկնէր: Վանքի դռան մօտ սպասում էր նրա ձին: Համը դուրս չեկաւ իր խուցից: Ասլանը ինքը գնաց նրան մնաք բարեաւ ասելու: Յետոյ մենք միասին ոտով գնացինք մինչեւ Խորենացու գերեզմանը: Այստեղ կանգնեցրեց ինձ նա, այստեղ գրկոեցաւ, համբուրոեցաւ ինձ հետ, եւ այստեղից, իր ձին նստելով, ճանապարհ ընկաւ: Ես երկար նայում էի նրա ետեւից, բայց ոչինչ չէի տեսնում: Հեղեղի նման հոսող արտասուքը նսեմացրել էր իմ տեսութիւնը...

Նա գնա՛ց, ուր պարտքը եւ եռանդը մղում էին նրան... Նա գնաց, բայց նրա թանկագին յիշատակը միշտ անմոռաց մնաց իմ սրտում... Որքան աճեցին իմ տարիները, որքան աճեց իմ զարգացումը, այնքան աւելի աճեց եւ մեծացաւ իմ աչքում յարգելի մարդը, որ այնպէս ջերմ, անձնազոհ կերպով նոիրուած էր իր հայրենիքի բարօրութեան գործին...

ԼԳ. ԱՄՐՈՑԻ ԱՂՋԻԿԸ

Անցան տարինե՛ր: Քանի՞ տարիներ, լաւ չեմ յիշում...

Տխո՛ւր ու ծա՛նր էին ժամանակները: Կարծես, մի բան բոլոր սրտերի վրայ ճնշում էր, բոլորին շոարեցնում էր: Մարդիկ դժգոհ էին, բայց չգիտէին թէ ի՞նչ բանից են դժգոհ: Տիրում էր ընդհանուր վհատութիւն, ընդհանուր